

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆ

Հ/Հ	Առարկաների անվանումը և մոդուլները	Առես. ըստ կիս.			Ժամերը			ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ԿՈՒՐՍԵՐԻ ԵՎ ԿԻՍԱՍ.						VI
		Քննություն	Ստուգաթիվ	Կուրսային աշխատանք	պարտադիր լսար. բեռնված			I		II		III		
					Ընդամենը	այդ թվում		3	4	5	6	7	8	
						Դասադրուս. քանակ	Լաբորատ. Գործունակություն							
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ							17	18	17	12	14	10	
1.1	Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ	4	3		72	36	36	40	32					
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		4տ		54	30	24		54					
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		54	30	24		54					
1.4	Իրավունքի հիմունքներ		6տ		36	24	12				36			
1.5	Պատմություն	3			51	30	21	51						
1.6	Ռուսաց լեզու		3,4տ		70	35	35	40	30					
1.7	Օտար լեզու		3,4տ		70	35	35	40	30					
1.8	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6,		176	4	172	34	36	34	24	28	20	
	ԸՆԴԱՄԵՆ				583	224	359	205	236	34	60	28	20	
2	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
2.1	Էկոլոգիայի հիմունքներ		3տ		36	24	12	36						
2.2	Համակարգչային օպերատորության հիմունքներ	3			54	24	30	54						
2.3	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		18	8	10	18						
	ԸՆԴԱՄԵՆ				108	56	52	108						
3	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
3.1	Հաղորդակցություն	3			51	17	34	51						
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն		4տ		36	20	16		36					
	ԸՆԴԱՄԵՆ				87	37	50	51	36					
4	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
4.1	Հողագոյացում, հողի տիպերը, նրանց որակական գնահատումը		4տ		105	68	37		105					
4.2	Հողի մշակման համակարգեր		3տ		105	68	37	65	40					
4.3	Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը		4տ		68	34	34	68						
4.4	Բույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմները				105	68	37	64	41					
4.5	Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաներ	4			87	44	43			60	27			
4.6	Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում		4տ		85	43	42		85					
4.7	Պտղի և խաղողի արտադրության կազմակերպում		5,6		87	44	43			55	32			
4.8	Մելիորատիվ աշխատանքներ և ոռոգում	4			36	18	18		36					
4.9	Կերային մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիա	5			51	26	25			51				
4.10	Վիճակագրություն և տնտեսական գործունեության վերլուծություն	5			102	68	34			102				
4.11	Գյուղատնտեսական բեռների և արտադրանքի տեղափոխում, պահեստավորում, բաշխում		3տ		51	25	26	51						

4.12	Գյուղատնտեսական արտադրանքի փաթեթավորում և մարքեթինգ Ընդամենը		5տ		34	17	17			34				
					916	523	393		248	307	302	59		
5	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
5.1	Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիա	5	4		102	51	51			69	33			
5.2	Բույսերի պաշտպանություն	6	5		104	52	52					48	56	
5.3	Ցանքաշրջանառությունների համակարգը և նրանց առանձնահատկությունները		5,6		82	54	28				42	40		
5.4	Սնանապահական մթերքների արտադրության տեխնոլոգիա		6,7տ		104	52	52					48	56	
5.5	Գյուղատնտեսական կենդանիների կերակրում և խնամք	5			85	42	43				85			
5.6	Սնանաբուծական ծագում ունեցող մթերքների պահպանում, վերամշակում		6տ,7տ		92	62	30					35	57	
5.7	Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների բուժման և վարակի տարածման կանխարգելում	6	5		94	48	46				50	44		
5.8	ԱՄՀ-ի էկոնոմիկայի քանակական և տնտեսական բնութագրում		5տ,6տ		116	58	58				66	50		
5.9	Տնտեսական գործունեության պլանավորում		7,8տ		88	44	44						28	60
5.10	Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում		6,7տ		104	52	52					48	56	
5.11	Գյուղատնտեսական արտադրության կառավարում	8			80	40	40							80
5.12	Ֆինանսավարկային գործունեություն	8	7տ		116	58	58						56	60
5.13	Հաշվապահական հաշվառում և հարկեր	8	7		116	58	58						56	60
5.14	Աշխատանքային ռեսուրսների կառավարում և մոտիվացիա		7,8տ		68	34	34						28	40
5.15	Գյուղատնտեսական արտադրության համար անհրաժեշտ օբյեկտների շինարարություն և պահպանում		7,8տ		82	41	41						42	40
	Ընդամենը				1433	746	687			69	276	313	434	340
6	ԸՆՏՐՈՎԻ				41								41	
	ՊԱՅՄԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԵՐ													
	Ընդամենը				3168	1586	1541		612	648	612	432	504	360
7	ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱԼԵՐ													
7.1	Տրակտորների վարման հիմ. և երթ. անվտանգ. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ				300									
	Շաբաթական ժամերի քանակը								36	36	36	36	36	36

				Անհրաժեշտ կաբինետների, լաբորատորիաների և արհեստանոցների ցանկ	
ՊՐԱԿՏԻԿԱ		ԿԻՍԱՄՅԱԿ	ՇԱԲԱԹ	Կաբինետներ	Լաբորատորիաներ
1. Հողի մշակման համակարգեր – 1 շ. 2. Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում- 1շ. 3. Մելիորատիվ աշխատանքներ և ոռոգում – 1շ.		II	3	1. Հ. լեզու և գրականություն	1. Քիմիայի
1. Դաշտային մշակաբույսերի և բերքահավաքի տեխնոլոգիա- 1շ. 2. Պտղի և խաղողի արտադրության կազմակերպում - 1շ. 3. Բանջարաբուստանային մշակաբույսերի արտադրության տեխնոլոգիա- 1շ. 4. Գյուղատնտեսական կենդանիների կերակրում և խնամք- 1շ.		III	4	2. Ռուսաց և օտար լեզուներ	2. Ագրոքիմիայի
1. Բույսերի պաշտպանություն – 1շ. 2. Անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիա – 1շ. 3. Անասնաբուժական ծագում ունեցող մթերքների պահպանում և վերամշակում – 1շ. 4. ԱԱՀ-ի էկոնոմիկայի քանակական և տնտեսական բնութագրումը – 1շ.		IV	4	3. Պատմություն 4. Կենսագործ.անվտանգություն	3. Բուսաբուծություն 4. Պտուղ. բանջ. վերամշ.
1. Գյուղատնտեսական կենդ. հիվանդ. բուժ. և վարակի տար. կանխ. – 2 շ. Հաշվապահական հաշվառում և հարկեր - 2 շ. 2. Տնտեսական գործունեության պլանավորում- 1 շ. 3. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում – 2շ.		V	7	5. Տնտեսագիտություն 6. Բույսերի պաշտպանություն	5. Անասնաբուծության 6. Մեքենայացման
1. Գյուղատնտեսական արտադրության կառավարում – 2 շ. 2. Ֆինանսավարկային գործունեություն – 2 շ.		VI	4	7. Ուսումնամեթոդական	7. Ինֆորմատիկայի
ԸՆԴԱՄԵՆԸ			22	Սպորտային համալիր	Արհեստանոցներ
ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ				1 Սպորտային դահլիճ 2 Սպորտ հրապարակ 3. Ֆուտբոլի դաշտ	1 Ատաղծագործություն 2 Խառատային
1	ա) Բուսաբուժական մթերքների արտադրության տեխնոլոգիա				
	բ) Անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիա				
2	Ագրոքիզնեսի և կառավարման հիմունքներ				

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

- Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առավելագույնը 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված
նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
«ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

Սողուլի դասիչը՝

ԳՏԿ 1-08-001

Սողուլի տևողությունը՝

51 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝

Տեսական պարապմունք՝

17 ժամ

Գործնական աշխատանք՝

34 ժամ

Սողուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է նրանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Սողուլը կարելի է սովորել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Սա նշանակում է, որ դասավանդողները պիտի խրախուսեն տարբեր մոտեցումներ բացահայտելու հնարավորությունները, ինչպես օրինակ՝ դերային խաղեր, տեսանյութեր, մանուկ ուսումնասիրություն և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կզարգացնի հաղորդակցության կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա սահմանել ուսումնառության անձնական նպատակները,
2. կարողանա կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում,
3. կարողանա նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ,
4. կարողանա մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ,
5. կարողանա կատարել փաստաթղթավորում:

Գնահատման կարգը՝

Յուրաքանչյուր արդյունքի համար բավարար առաջադիմության սահմանումը վկայում է ընդհանուր գնահատման համար անհրաժեշտ անցումային միավորի ձեռք բերման մասին: Այդուհանդերձ, մոդուլի ընթացքում ուսանողի կողմից կատարվող վարժությունների քանակը չպետք է սահմանափակվի գնահատման համար նախատեսված վարժություններով: Սովորողին Հաղորդակցության մոդուլից անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Ուսումնառության և դասավանդման մոտեցումները պետք է ուսանողին օգնեն սահմանել իրենց ձեռքբերումները և ստացած հմտությունները կիրառել այլ համատեքստերում: Հաղորդակցության մոդուլի պրակտիկայի ծրագրերը պետք է այնպես կազմված լինեն, որ մի շարք առաջադրանքների միջոցով կիրառվեն հաղորդակցության նպատակային և բազմազան գործածության փոխկապակցված հմտություններ: Այս առաջադրանքները կարող են արտահայտել ուսանողների մասնագիտական հետաքրքրությունը կամ կարող են ավելի ընդհանրական բնույթի լինել: Խորհուրդ է տրվում, որ այս առաջադրանքները քննարկվեն և պլանավորվեն այնպես, որ գնահատման ենթակա արդյունքը ստեղծվի ընթացիկ աշխատանքների ընթացքում և ոչ թե առանձին վարժության շրջանակում: Հաղորդակցության մոդուլի մեջ ուսումնառությունը և դասավանդումը պետք լինեն ակտիվ և ուսանողակենտրոն: Ուսանողը պետք է հնարավորություն ունենա պլանավորել և ինքնուրույն որոշումներ կայացնել, նախաձեռնություն և ինքնուրույնություն ցուցաբերել և միասնաբար աշխատել խմբերում: Ուսանողները պետք է ներգրավված լինեն այնպիսի գործողություններում, որտեղ հնարավոր լինի լեզուն օգտագործել իրական իրավիճակներում իրական նպատակներով: Նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցել նախագծերում կամ հաղորդակցության մոդուլի ծրագրով սահմանված վարժություններում կամ այլ մասնագիտական և սոցիալական բնույթի գործողություններում: Բոլոր ամփոփիչ գնահատումների կարևորագույն մաս պետք է կազմի ուսանողներին տրված նորից գրելու, վերանայելու, կրկնելու հնարավորությունը: Ուսանողները պետք է ներգրավված լինեն իրենց կարողությունները ընդարձակող գործողություններում: Նպատակահարմար կլինի խմբային խաղերի իրագործումը:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Սովորողը՝

- ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողը կներկայացնի հակիրճ գեկույց, որտեղ կարտահայտի իր անձնական պատկերացումները ուսումնառության նպատակների և գործընթացների, ինչպես նաև ուսումնառության տարբեր եղանակների մասին: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՄ 2. Կարողանում է կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Սովորողը`

- օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- տեղեկատվության առանձնացում/խմբավորումը նպատակային է կատարում,
- հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կհանձնարարվի որևէ պարզ թեմա և/կամ ոչ գեղարվեստական տեքստ, ըստ որի նա պետք է կազմի մեկ կամ մի քանի մասից բաղկացած գրավոր հաղորդում և կատարի բանավոր ներկայացում: Այդ գրավոր խոսքը պետք է պարունակի ոչ ավելի, քան 50 բառ, իսկ բանավոր ներկայացումը պետք է տևի մոտ մեկ րոպե: Լրացուցիչ ժամանակ պետք է տրամադրվի նաև հարցերի համար, և ուսանողը պետք է իր կարծիքը արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետների կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստերի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Կատարման բոլոր չափանիշները պետք է ձեռք բերվեն և գրավոր, և բանավոր խոսքի ընթացքում միաժամանակ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	4 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՄ 3. Կարողանում է նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Սովորողը`

- ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են.
 - ✓ պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - ✓ գրառումներ կատարելը,
 - ✓ ամփոփելը,
- ազատ կերպով ձևակերպում, արտահատում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- ցուցաբերում է համոզելու հատկություն,
- կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Կներկայացվի տեքստ, որը նկարագրում է որևէ ոչ միանշանակ իրավիճակ, խնդիր և/կամ գաղափար: Ուսանողը կընդգրկվի երկու և/կամ ավելի հոգուց կազմված խմբում, որի անդամներից մեկը կարող է լինել դասավանդողը: Քննարկման համար տրվող առավելագույն ժամանակը 3 րոպե է (յուրաքանչյուր մասնակցի համար): Ուսանողը պետք է ամենաանհրաժեշտ տեղեկություն տա տեքստում առկա հարցերի մասին և խմբի անդամներին ներկայացնի իր տեսակետները և

նկատառումները: Այն կարող է լինել մեկ տեսակի տեղեկատվություն և/կամ փաստացի նկարագրություն:

Գնահատման համար հատկապես պետք է ուշադրություն դարձվի ուսանողի կողմից դիմացինի տեսակետը լսելու և դրանից հետևություններ անելու հմտությանը: Անհրաժեշտ է կազմել համատեքստի կամ օգտագործված աղբյուրի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Քննարկումը ըստ դասավանդողի հայեցողության կարող է փոխարինվել տրված թեմայով հարցազրույցի:

Բոլոր կատարման չափանիշներն էլ պետք է ձեռք բերվեն մեկ առաջադրանքի շրջանակում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	5 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ, և նկարներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Սովորողը`

- ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել մեկական սխեմա, աղյուսակ, դիագրամ և նկար` դրանց մասին բանավոր հաղորդում կատարելուն վերաբերող հմտությունները ստուգելու նպատակով: Յուրաքանչյուր ներկայացումը պետք է տևի միջինը 1 րոպե: Լրացուցիչ ժամանակ կտրամադրվի նաև հարցերի համար: Ուսանողը պետք է իր կարծիքը արտահայտի ուրիշների կողմից հնչեցված տեսակետի կամ հարցերի վերաբերյալ: Անհրաժեշտ է կազմել համատեքստի բնութագիր, որը կարող է ստուգման թերթիկի կամ արձանագրության տեսք ունենալ: Արդյունքի բավարար իրագործումը հիմնված կլինի սահմանված կատարման բոլոր չափանիշների իրականացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

Սովորողը`

- ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ նրանց նշանակության,
- ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,
- ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կհանձնարարվեն կազմել տարբեր տեսակի փաստաթղթեր, ինչպիսիք են.

- դիմում
- ինքնակենսագրություն (տրված տարբեր տեսակի ֆորմատներով)
- պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ
- արձանագրություն
- երաշխավորագիր
- վավերագիր և այլն

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԳՏԿ 1-08-002

Մոդուլի տևողությունը՝

36 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝

Տեսական պարապմունք՝

20 ժամ

Գործնական աշխատանք՝

16 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը մշակվել է արտադրական ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է արտադրական ձեռնարկության բոլոր մակարդակների աշխատողներին:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,
2. կարողանա շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում,
3. հստակ ներկայացնի արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները,
4. կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՄՔ 1. Կարողանում է ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ՝

- ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները:
- կարողանում է լրացնել ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը:
- հստակ պատկերացնում է աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը:
- ճիշտ է շարադրում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
- ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը:
- ճիշտ է շարադրում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է անհրաժեշտ կարողություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների միջոցով՝ անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի մուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

ԱՐԴՅՈՒՔ 2. Կարողանում է շարադրել անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Կարողանում է շարադրել տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- Կարողանում է ներկայացնել էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, մասնավորապես՝ հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը
- Կարողանում է շարադրել ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Սովորողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 3. Կարողանում է հստակ ներկայացնել արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- Պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,
- Ճիշտ շարադրում է արտադրական միկրոկլիմայի վերաբերյալ նորմատիվային պահանջները,
- Ճիշտ ներկայացնում է արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,
- Ճիշտ շարադրում է արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային

տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	6 ժամ
Գործնական աշխատանք`	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է կազմակերպել առաջին բուժօգնություն և ներկայացնել անհրաժեշտ միջոցները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- կարողանում է ճիշտ կատարել արհեստական շնչառություն,
- կարողանում է ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,
- կարողանում է դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,
- կարողանում է վիրակապել կոտրվածքները ,
- կատարում է առաջին օգնություն այրվածքների դեպքում,
- ճիշտ է կատարում առաջին օգնությունն էլեկտրահարման դեպքում:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը: Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	2 ժամ
Գործնական աշխատանք`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ՀՈՂԱԳՈՅԱՑՈՒՄ, ՀՈՂԻ ՏԻՊԵՐԸ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»

Մոդուլի դասիչը՝ **ԳՏԿ 1-08-003**

Մոդուլի տևողությունը՝

105 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝

Տեսական պարապմունք՝ 68 ժամ

Գործնական աշխատանք՝ 37 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության ֆերմեր որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է գյուղացիական տնտեսության կազմակերպիչին տալ գիտելիքներ հողերի տեսակների, նրանց բերրիության հատկությունների, տարածված հողատիպերի, հողերի որակական հատկությունների, զնահատման մեթոդների, ինչպես նաև առանձին հողատիպերում տարբեր մշակաբույսերի տեղաբաշխման վերաբերյալ:

Մուտքային մակարդակը՝

Ուսանողը պետք է իմանա մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների հիմունքները:

Արդյունքները՝

Մոդուլի յուրացումից հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ բնութագրել տարածված հողատիպերը և հողատեսքերը,
2. կարողանա ճիշտ շարադրել հողերի որակական զնահատման մեթոդները և ցուցանիշների համակարգը,
3. կարողանա հստակ շարադրել հողի բերրիության տեսակները և նրանում ընթացող գործընթացները,
4. կարողանա հաշվարկել հողերի տնտեսական զնահատման ցուցանիշները:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՄՔ 1. Կարողանում է ճիշտ բնութագրել տարածված հողատիպերը և հողատեսքերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐԸ՝

Գիտի հողերի տիպերի և հողատեսքերի բնութագիրը,
գիտի ըստ հողատիպերի մշակաբույսերի տեղաբաշխման առանձնահատկությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվի առաջադրանք ըստ հողի ստրուկտուրայի, մեխանիկական կազմի, գույնի, կառուցվածքի և հզորության, որոշել հողային տիպերը: Արդյունքը կգնահատվի բավարար, եթե երբ ուսանողը ըստ հողի ստրուկտուրայի, մեխանիկական կազմի, գույնի, կառուցվածքի և հզորության, ճիշտ կվորոշի հողային տիպը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ հողի հատկությունների, ինչպես նաև տվյալ հողատիպերին բնութագրող մշակաբույսերի տեղաբաշխման առանձնահատկությունների մասին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	18 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՄՔ 2. Կարողանում է ճիշտ շարադրել հողերի որակական զնահատման մեթոդները և ցուցանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- գիտի հողերի որակական զնահատման մեթոդները,
- գիտի հողերի որակական զնահատման ցուցանիշների համակարգը»
- կարողանում է վերցնել հողերի որակական զնահատման նմուշներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվի առաջադրանք, հողերի որակական գնահատման մեթոդների և հողերի բռնիտավորման մասին: Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է բավարար, երբ ուսանողը կարողանում է ըստ հողի նմուշի տալ նրա որակական գնահատականը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ հողերի գնահատման սանդղակ (շկալա), որը պետք է կազմված լինի տվյալ տարածքին համապատասխան:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	18 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է հստակ շարադրել հողի բերրիության տեսակները և նրանում ընթացող գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- Կարողանում է ճիշտ ներկայացնել հողի բնական բերրիության էությունը
- գիտի և բացատրում է հողի արհեստական բերրիության անհրաժեշտությունը
- ճիշտ է բացատրում է հողի տնտեսական բերրիությունը
- գիտի և ներկայացնում է տարբեր բերրիության հողերի օգտագործման արդյունավետ ուղղությունները ըստ տնտեսական շրջանների

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվի առաջադրանք, հողերի բերրիության տեսակների տարբերության առանձնահատկությունների մասին: Արդյունքի ձեռքբերումը գնահատվում է բավարար, երբ ուսանողը ցուցաբերում է գիտելիքներ բնական և արհեստական բերրիությունների մասին, ինչպես նաև հիմնավորում է տնտեսական բերրիությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ հողերի հորիզոնների մասին և վարելաշերտում հումուսի բաղադրության մասին պլակատներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	16 ժամ
Գործնական աշխատանք`	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է հաշվարկել հողերի տնտեսական գնահատման ցուցանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ`

- գիտի հողերի տնտեսական գնահատման մեթոդները,
- գիտի հողերի տնտեսական գնահատման հիմնական ցուցանիշները,
- կարողանում է հաշվարկել հողերի տնտեսական գնահատականը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվի առաջադրանք, հողերի տնտեսական գնահատման և հողային կադաստրի մասին: Սովորողը կարողանում է ներկայացնի հողերի ագրոտնտեսական գնահատման սանդղակը` տվյալ տարածքի համար արտահայտված որակական և տնտեսական գնահատման բալերով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ կադաստրային հողային քարտեզ որտեղ նշված են հողօգտագործման սահմանները, տերիտորիայի ռելիեֆը, գյուղատնտեսական հողատեսքերը, բնակավայրերը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	16 ժամ
Գործնական աշխատանք`	9 ժամ

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
«ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»

Մոդուլի դասիչը՝ **ԳՏԿ 1-08-004**

Մոդուլի տևողությունը՝

105 ժամ

Դասընթացի մատուցման ձևը՝

Տեսական պարապմունք՝

68 ժամ

Գործնական աշխատանք՝

37 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության ֆերմեր որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ հողի մշակման նպատակների և խնդիրների, հողի մշակման հիմնական և մակերեսային համակարգերի, նրանց կիրառման եղանակների և ձևերի մասին, կապված բույսերի աճի և զարգացման համար համապատասխան պահանջների և հողային պայմանների ստեղծման հետ:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է տիրապետել մոդուլին:

ԳՏԿ 1-08-003

Արդյունքները՝

Մոդուլի յուրացումից հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել հողի մշակության անհրաժեշտ խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները,
2. կարողանա ներկայացնել հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները,
3. կարողանա ճիշտ բնութագրել հողի մշակման համակարգերը, նրա բաղկացուցիչ տարրերը,
4. կարողանա ճիշտ շարադրել ցելերի տեսակները, մշակման առանձնահատկությունները:

Գնահատման կարգը՝

Մոդուլի գնահատման ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել հողի մշակությանը անհրաժեշտ խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԸ՝

կարողանում է հիմնավորել հողի մշակման անհրաժեշտությունը և նրա հետ կապված խնդիրները, կարողանում է շարադրել հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն որոշակի հարցադրումներ՝ կապված հողի մշակման խնդիրների և տեխնոլոգիական գործընթացների հետ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվել է գիտելիքներ հողի մշակման նպատակի, անհրաժեշտության և խնդիրների մասին: Գործնական աշխատանքների ժամանակ ուսանողը փորձարարական աշխատանքներ է կատարում հողի կառուցվածքի փոփոխությունների վերաբերյալ, ինչպես նաև բույսերի աճի համար հողում ստեղծված պայմանների վերաբերյալ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝

18 ժամ

Գործնական աշխատանք՝

10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է ներկայացնել հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- տիրապետում է հողի հիմնական և մակերեսային մշակման եղանակներին,
- կարողանում է հիմնավորել գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր, հողի հիմնական և մակերեսային մշակումների տեխնոլոգիական գործնթացների տարբերության վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստոգան թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների ձևով: Սովորողին պետք է տրվի գիտելիքներ այն մասին, թե որ դեպքերում պետք է կատարել հողի հիմնական մշակում, և որ դեպքերում մակերեսային մշակումներ՝ կապված դաշտը զբաղեցրած մշակաբույսերի, ցելերի առանձնահատկությունների և հողի ամրության հետ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	18 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է ճիշտ բնութագրել հողի մշակման համակարգերը, նրա բաղկացուցիչ տարրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ճիշտ է շարադրում հողի մշակման համակարգերը տարբեր բնակլիմայական գոտիներում:
- կարողանում է ներկայացնել հողի նախացանքային, ցանքային և հետցանքային գործընթացները,
- ճիշտ է բնութագրում բերքահավաքին հաջորդող գործընթացները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն հարցեր հողի նախացանքային, հետցանքային և բերքահավաքից հետո կատարվող գործընթացների, նպատակների և խնդիրների վերաբերյալ, կապված տարբեր մշակաբույսերի առանձնահատկությունների հետ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվելու են գիտելիքներ, թե տարբեր մշակաբույսեր և ցելեր ինչ ազդեցություն են ունենում հողի ֆիզիկական հատկությունների վրա, հողի միավոր ծավալում, կարծր ֆազի և ընդհանուր ծակոտկենության համամասնության, հողի ամրության, ինչպես նաև հողի խոնավության և սննդատարերի վրա: Գործնական պարապմունքների ժամանակ ուսանողը փորձարարական աշխատանքով պետք է պարզի հողի վարելաչափի կառուցվածքի վիճակը և միավոր ծավալում կարծր, հեղուկ և գազային ֆազերի համամասնությունը:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	16 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է ճիշտ շարադրել ցելերի տեսակների մշակման առանձնահատկությունները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ճիշտ է բնութագրում ցելերի էությունը և տեսակները:
- կարողանում է ճիշտ ներկայացնել ցելերի կիրառման պայմանները:
- տիրապետում է ցելերի կատարման տեխնոլոգիաներին:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողին կտրվեն հարցեր, պարզելու, թե որ դաշտում, որ մշակաբույսերից հետո և ինչու են թողնում ցելի տակ: Կտրվեն նաև հարցեր ցելերի դասակարգման, նրանց կիրառման ժամկետների ու

տեսակների կիրառման անհրաժեշտության մասին: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Դասախոսությունների միջոցով ուսանողին տրվելու են գիտելիքներ՝ ցելերի, նրանց դասակարգման, հողի բերրիության վրա ունեցած ազդեցության, ցելից հետո մշակվող մշակաբույսերի առանձնահատկությունների, հողում խոնավության կուտակման և պահպանման, կատարած ծախսումների փոխհատուցման հարցերը:

ՌԵՍՈՒՑՍԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք՝	16 ժամ
Գործնական աշխատանք՝	9 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

Սողուլի դասիչը՝ ՖՏԿ 1-08-005

Սողուլի տևողությունը՝	68 ժամ
Դասընթացի մատուցման ձևը՝	Տեսական պարապմունք՝ 34 ժամ Գործնական աշխատանք՝ 34 ժամ

Սողուլի նպատակը՝

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության՝ ֆերմեր որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա որոշել տվյալ հողի 1հա-ին անհրաժեշտ պարարտանյութերի քանակը տվյալ մշակաբույսերի համար, գիտենա պարարտանյութերը հող մտցնելու եղանակները, կարողանա հաշվարկել և համատեղ կիրառել օրգանական, հանքային և բակտերիալ պարարտանյութեր: Կարողանա տարբերել և դասակարգել պարարտանյութերը ըստ սննդանյութերի պարունակության և ազդեցության բնույթի:

Մուտքային մակարդակը

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ 1-08-004 մոդուլը:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել պարարտանյութերը հող մտցնելու ձևերը և եղանակները,
2. կարողանա ճիշտ բնութագրել օրգանական պարարտանյութերը, դերն ու նշանակությունը,
3. կարողանա ճիշտ բնութագրել հանքային պարարտանյութերը, դերն ու նշանակությունը,
4. կարողանա ճիշտ բնութագրել բակտերիալ պարարտանյութերը, դերն ու նշանակությունը,
5. կարողանա ճիշտ բնութագրել խոտադաշտային ցանքաշրջանառությունում պարարտացման սխեման,

Գնահատման կարգը

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել պարարտանյութերը հող մտցնելու ձևերը և եղանակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ

- կարողանում է դասակարգել պարարտանյութերը,
- տիրապետում է պարարտանյութերը հողը մտցնելու ձևերին,
- տարբերում է մշակաբույսերի համար անհրաժեշտ պարարտանյութերի տեսակները,
- ճիշտ հաշվարկում է յուրաքանչյուր մշակաբույսի համար 1 հա-ի հաշվով պարարտանյութի նորմաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ թե՛ տարբեր մշակաբույսի համար ինչպիսի պարարտանյութեր են անհրաժեշտ և այդ պարարտանյութերը հող մտցնելուց ինչպես են բարձրանում տվյալ մշակաբույսերի բերքատվությունը և բարելավվում հողի որակը: Սովորողը պետք է կարողանա հաշվարկել տարբեր մշակաբույսերի համար 1 հեկտարի համար անհրաժեշտ պարարտանյութերի քանակը: Պետք է գիտենա պարարտանյութերը հող մտցնելու կարգը գութանով, կուլտիվատորով, սկավառակով և այլն: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ պարարտանյութերի տեսակների, հողը մտցնելու եղանակների և անհրաժեշտ քանակի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր պարարտանյութեր, չափիչ գործիքներ, աղյուսակներ, ուսումնական գրականություն և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է ճիշտ բնութագրել օրգանական պարարտանյութերը, դերն ու նշանակությունը,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- գիտի, ինչպիսի օրգանական պարարտանյութեր կան (գոմաղբ, կոյաջուր, տորֆ, կոմպոստներ, թռչունների ծերտը),
- գիտի, թե գոմաղբը իր մեջ ինչպիսի սննդարար տարրեր է պարունակում (ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, մագնեզիում),
- կարողանում է հաշվարկել մշակաբույսերին տրվող անհրաժեշտ քանակությամբ գոմաղբի դեպքում, քանի ցենտներով է ավելանում բերքատվությունը,
- գիտի գոմաղբը դաշտ փոխադրող մեքենաները և այն հող մտցնելու ժամկետները:

ԳՆԱՂՍՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ՝ որի օգնությամբ նա պետք է գիտենա, որ գոմաղբը սիստեմատիկորեն հողի մեջ մտցնելու դեպքում բարելավվում է նրա հատկությունները, բարձրացնում բերքատվությունը, որ գոմաղբի քայքայման հետևանքով հողում գոյացած հումուսը մասնակցում է նրա ստրուկտուրայի ստեղծմանը և բարելավվում է հողագործության համար օգտակար բակտերիաների աշխատանքի պայմանները, հետևապես բույսի կյանքի պայմանները: Պետք է գիտենա, որ գոմաղբը իր մեջ պարունակում է բույսերի համար անհրաժեշտ բոլոր սննդարար նյութերը: Պետք է գիտենա, թե գոմաղբը և մյուս օրգանական պարարտանյութեր, երբ են դաշտ փոխադրում և ինչ մեքենաների օգնությամբ են հող մտցնում: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ օրգանական պարարտանյութերի, նրանց մեջ պարունակող սննդարար նյութերի, տարբեր մշակաբույսերին տրվող քանակության, տրման ժամկետների և հողը մտցնելու ձևերի վերաբերյալ: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր օրգանական պարարտանյութեր, աղյուսակներ, ուսումնական գրականություն և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	6 ժամ
Գործնական պարապմունք՝	6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է ճիշտ բնութագրել հանքային պարարտանյութերը, դերն ու նշանակությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- կարողանում է դասակարգել հանքային պարարտանյութերը,

- գիտի հանքային տարբեր պարարտանյութերը, ինչպիսի ազդեցություն են ունենում մշակաբույսերի վրա,
- գիտի հանքային պարարտանյութերը հող մտցնելու եղանակները և ժամանակը

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ` որի օգնությամբ նա պետք է դասակարգի հանքային պարարտանյութերը և պետք է գիտենա, որ հանքային պարարտանյութերը ավելի շատ էֆեկտ են տալիս այն դեպքում, երբ դրանք օրգանական պարարտանյութերի հետ միասին են մտցվում հողի մեջ: Սովորողը պետք է գիտենա թե հանքային պարարտանյութերից որը ինչ ազդեցություն է ունենում մշակաբույսերի վրա (լավացնում է բերքի որակը, ավելացնում է սպիտակուցների պարունակությունը, տալիս է ամրություն, դարձնում է ցրտադիմացկուն, դիմանում է երաշտին և սնկային հիվանդություններին): Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողին տալ գիտելիքներ տարբեր մշակաբույսերի վրա հանքային պարարտանյութերի գործած ազդեցության, անհրաժեշտ քանակության, տրման ժամկետների և հողը մտցնելու ձևերի մասին: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր հանքային պարարտանյութեր, աղյուսակներ, ուսումնական գրականություն և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 6 ժամ
 Գործնական պարապմունք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է ճիշտ բնութագրել բակտերիալ պարարտանյութերը, դերն ու նշանակությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- կարողանում է ճանաչել բակտերիալ պարարտանյութերը,
- գիտի բակտերիալ պարարտանյութերի ազդեցությունը տարբեր մշակաբույսերի վրա,
- կարողանում է հաշվարկել տարբեր մշակաբույսերի մշակման համար անհրաժեշտ բակտերիաների քանակը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողը իր ուսումնառության ընթացքում պետք է սովորի և գիտանա, թե տարբեր մշակաբույսերի սերմերի մշակումը և ախտահանումը ինչ բակտերիաներով և ինչ քանակությամբ է կատարվում (միտրագին, ազոտաբակտերիա, ֆոսֆորաբակտերիա, ֆորմուլին և այլն): Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով` նպատակ ունենալով ուսանողներին տալ գիտելիքներ բակտերիալ պարարտանյութերի և դրանց օգտագործման վերաբերյալ և ձևավորել նրանց մեջ կարողություններ տվյալ մշակաբույսին անհրաժեշտ քանակությամբ բակտերիալ պարարտանյութերի հաշվարկման համար: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են տարբեր բակտերիալ պարարտանյութերի վերաբերյալ դիդակտիկ նյութեր, աղյուսակներ, մեթոդական ցուցումներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 8 ժամ
 Գործնական պարապմունք` 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է ճիշտ բնութագրել խոտադաշտային ցանքաշրջանառությունում պարարտացման սխտեմը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- կարողանում է ճիշտ կիրառել օրգանական և հանքային պարարտանյութերը,
- գիտի ցանքաշրջանառության մեջ օրգանական և հանքային պարարտանյութերի ճիշտ տեղաբաշխումը,

- կարողանում է կատարել պարարտանյութերը հող մտցնելու միջոցառումներ. ա) կուտակել, ճիշտ պահել և ժամանակին դաշտ փոխադրել, բ) հարթեցնել տորֆ և պատրաստել կոմպոսներ՝ օգտագործելով ֆեկալները և մյուս բոլոր տեսակի թափուկները, գ) հավաքել մոխիրը, հայթայթել կիր, դ) ժամանակին փոխադրել հանքային պարարտանյութերը և ճիշտ կազմակերպել պահպանումը, ե) պատրաստել ջրանալցված օրգանահանքային պարարտանյութեր, զ) ցանել լյուպին կանաչ պարարտացման համար, է) մեքենայացնել պարարտանյութերը հող մտցնելու և ծածկելու աշխատանքները և այլն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Սովորողին կտրվեն մի շարք առաջադրանքներ, որի օգնությամբ ուսանողը պետք է գիտենա օրգանական և հանքային պարարտանյութերի ճիշտ կիրառումը, դրանց ճիշտ տեղաբաշխումը ցանքաշրջանառության մեջ և կարողանա կատարել պարարտանյութերը հող մտցնելու միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված բոլոր չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի բոլոր առաջադրանքները: Աշխատանքի գրանցումը կատարելու համար պետք է օգտագործել համապատասխան ստուգման թերթիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով՝ նպատակ ունենալով ուսանողներին տալ գիտելիքներ ցանքաշրջանառության ընթացքում պարարտացման սիստեմների վերաբերյալ և ձևավորել կարողություններ ու հմտություններ ճիշտ կազմակերպելու միջոցառումներ պարարտանյութերը հող մտցնելու համար: Ուսուցման ընթացքում օգտագործվել են տարբեր բակտերիալ պարարտանյութերի վերաբերյալ դիդակտիկ նյութեր, աղյուսակներ, մեթոդական ցուցումներ և այլն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	8 ժամ
Գործնական պարապմունք`	8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԲՈՒՅՍԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՌԵԺԻՄՆԵՐԸ»

Սողուլի դասիչը` ԳՏԿ 1-08-006

Սողուլի տևողությունը`

105 ժամ

Դասընթացի մատուցման ձևը`

Տեսական պարապմունք` 68 ժամ

Գործնական աշխատանք` 37 ժամ

Սողուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության` ֆերմեր որակավորմամբ մասնագետի համար: Նպատակն է տալ գիտելիքներ կենդանական աշխարհի գոյատևության համար օրգանական նյութ ստեղծող մշակաբույսերի կյանքին անհրաժեշտ պահանջների, նրանց ունեցած դերի, մշամակության, ինչպես նաև այն պայմանների մասին, որոնք պետք է նպաստեն օրգանական նյութերի ստացմանը:

Մուտքային մակարդակը`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է տիրապետի «Հողի տեսակները և նրանց որակական գնահատումը», «Երկրագործության հիմունքներ» մոդուլները:

Արդյունքները`

Այս մոդուլն յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա ներկայացնել և հիմնավորել մշակաբույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները, նրանց դերն ու մշամակությունը:
2. Կարողանա շարադրել բույսի կյանքին անհրաժեշտ գործոններին վերաբերող գիտական երկրագործության օրենքները և նրանց կիրառման արդյունավետությունը:
3. կարողանա ներկայացնել յուրաքանչյուր գործոնի գործընթացի պահանջվելիք համապատասխան պայմանների ստեղծումը:

Գնահատման կարգը`

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ներկայացնել և հիմնավորել մշակաբույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները, նրանց դերն ու նշանակությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇՆԸ`

- Գիշտ է պատկերացում և շարադրում բույսերի կողմից օրգանական նյութ (բերք) ստեղծելու համար բույսերի կյանքին անհրաժեշտ պահանջները (գործոնները):
- Գիշտ է ներկայացնում այդ գործոնների դերն ու նշանակությունը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողին կտրվեն հարցեր բույսի յուրաքանչյուր պահանջի անհրաժեշտության մասին, նրանց կատարելիք դերի մասին: Ուսանողը պետք է հստակ շարադրի բույսերին անհրաժեշտ գործոնների դերն ու նշանակությունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով սովորողին տալ գիտելիքներ բույսի կյանքին անհրաժեշտ տիեզերական (երկնային) գործոնների (լույս, ջերմություն) և հողային (երկրային) գործոնների (օդ, սննդամթերք, ջուր) մասին: Ուսումնառության համար կոգտագործվեն անհրաժեշտ գրականության և թեմային վերաբերվող դիդակտիկ նյութեր:

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է պլանավորել բուսաբուծական ճյուղի ագրոտեխնիկական միջոցառումների, սորտերի արտադրական հնարավորությունների, պարարտանյութերի կիրառման, ոռոգման միջոցառումների բարելավման, մշակաբույսերի բերքատվության սպասվելիք մակարդակը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Կարողանում է պլանավորել բուսաբուծական ճյուղի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները, մշակաբույսերի բերքատվությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին տրվում են առաջադրանքներ և ելակետային տվյալներ բուսաբուծական ճյուղի վիճակի, մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության պլանավորման, առկա հնարավորությունների հիմքի վրա ճյուղի զարգացման պլանավորման նպատակով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, բուսաբուծության ճյուղի զարգացման պլանների մշակման իմացության և հմտությունների ձևավորման նպատակով: Ուսումնական գործընթացում կօգտագործվեն ուսումնամեթոդական գրականություն, ցուցադրական նյութեր, տեխնիկական միջոցներ և նորմատիվներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 10 ժամ
Գործնական աշխատանք` 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է պլանավորել անասնաբուծական ճյուղի կերերի, պահանջը, գլխաքանակը, մթերատվությունը, անհրաժեշտ միջոցների պահանջը և հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Կարողանում է պլանավորել անասնաբուծական ճյուղի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշները, կազմել ճյուղի հեռանկարային զարգացման ծրագրեր:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, մթերատվության, անասնակերերի պահանջի պլանավորման նպատակով: Արդյունքը գնահատվում է համեմարարված առաջադրանքները սահմանված չափորոշիչի պահանջներին համապատասխան կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, որն ուղղված կլինի անասնագլխաքանակի, մթերատվության, կերապահովվածության և անասնաբուծական մթերքների արդյունավետության պլանավորման հարցերի իմացությանը և հմտությունների ձևավորմանը հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման ժամանակ: Ուսուցման ժամանակ օգտագործվում է ուսումնամեթոդական գրականություն, տեխնիկական միջոցներ, ցուցադրական նյութեր, նյութերի ծախսի նորմաներ և նորմատիվներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 10 ժամ
Գործնական աշխատանք` 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է կազմել բյուջեներ բուսաբուծական և անասնաբուծական արտադրության գծով:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Կարողանում է կազմել.

- բուսաբուծական արտադրանքի արտադրության բյուջեներ,
- անասնաբուծական արտադրանքի արտադրության բյուջեներ,
- տնտեսության ընդհանուր բյուջեներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ տնտեսության և առանձին ճյուղերի վերաբերյալ ելակետային տվյալներ արտադրական ներուժի վերաբերյալ, նյութական և դրամական ծախսերի նորմաների, արտադրանքի գծով շուկայական գներ: Արդյունքի յուրացումը կգնահատվի առաջադրանքի չափորոշիչների պահանջները կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացում կօգտագործվեն ցուցադրական նյութեր, գրաֆիկներ, տեխնիկական միջոցներ, վիճակագրական տեղեկատուներ և նորմատիվային նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 8 ժամ
Գործնական աշխատանք` 8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

Մոդուլի դասիչը` ԳՏԿ 1-08-024

Մոդուլի տևողությունը`

104 ժամ

Դասընթացի մատուցման ձևը

Տեսական պարապմունք` 52 ժամ

Գործնական աշխատանք` 52 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսվում է «Գյուղացիական տնտեսության կազմակերպիչ» մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ ագրարային ոլորտում տնտեսվարող սուբյեկտների, ընկերությունների, տնտեսությունների կազմակերպման հիմունքների,

նրանց կարգավիճակի, բուսաբուծության և անասնաբուծության արտադրության գործընթացների, արտադրանքի իրացման, պահպանման, կազմակերպման խնդիրների, սկզբունքների և մեթոդների, ինչպես նաև տնտեսության ընդհանուր ռեսուրսային ներուժի օգտագործման կազմակերպման վերաբերյալ:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Տնտեսագիտության տեսություն» առարկան, «ԱԱՀ-ի էկոնոմիկայի քանակական և որակական բնութագրում», «Տնտեսական գործունեության պլանավորում» մոդուլները:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել տարբեր կարգավիճակ ունեցող տնտեսությունների կազմակերպման սկզբունքները և դրույթները,
2. կարողանա ճիշտ հաշվարկել բուսաբուծական ճյուղի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների պահանջը, կազմի աշխատանքային գործընթացների և մշակաբույսերի մշակության տեխնոլոգիական քարտեր,
3. կարողանա ճիշտ շարադրել անասնաբուծական ճյուղերում անհրաժեշտ արտադրամիջոցների, կերերի պահանջի հաշվարկման կարգը, հիմնական աշխատանքային գործընթացների կազմակերպման սկզբունքները,
4. կարողանա ճիշտ շարադրել աշխատանքային կոլեկտիվների կազմակերպման սկզբունքները, մեթոդները և աշխատանքի վարձատրությունը,
5. կարողանա ճիշտ շարադրել տնտեսության ընդհանուր ռեսուրսային ներուժի հողային, աշխատանքային, արտադրական ֆինանսական օգտագործման կազմակերպման հիմնահարցերը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել տարբեր կարգավիճակ ունեցող տնտեսությունների կազմակերպման սկզբունքները և դրույթները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ՝

Կարողանում է ճիշտ ներկայացնել տնտեսությունների կազմակերպման կարգավիճակը, դրանց կազմակերպման հիմնական սկզբունքները և սահմանում է կազմակերպման կառուցվածքի տարրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ տարբեր կարգավիճակ ունեցող տնտեսությունների ընկերությունների վերաբերյալ, հանձնարարվում տարբերակներ, որոնց հիման վրա ուսանողները մշակում են արդյունավետ կազմակերպական կառուցվածք ունեցող տնտեսությունների նախագծեր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, օգտագործելով ցուցադրական նյութեր, գծապատկերներ, տեխնիկական միջոցներ և բանվորական տետրեր, տեղեկատուներ և համապատասխան գրականություն:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի հարցումների, առաջադրանքի ստուգումների, ուսանողի կողմից բոլոր մանրամասների շարադրման և ներկայացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	10 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է հաշվարկել բուսաբուծական ճյուղի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների պահանջը, աշխատանքային գործընթացների կազմակերպման սկզբունքներն ու մեթոդները, կազմել մշակաբույսերի մշակության տեխնոլոգիական քարտեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ՝

Ինքնուրույն հաշվարկում է սերմերի, պարարտանյութերի, վառելանյութերի պահանջը, որոշում ապահովածության մակարդակը, հստակ ներկայացնում աշխատանքի կազմակերպման սկզբունքները և կազմում մշակաբույսերի տեխնոլոգիական քարտեր:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն ելակետային տվյալներ տարածաշրջանի գյուղացիական տնտեսությունների մշակաբույսերի վերաբերյալ, որոնք կհաշվարկեն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների պահանջը, կորոշեն ապահովվածությունը:

Արդյունքի ձեռքբերումը հիմնված կլինի սահմանված չափանիշների կատարման վրա, որի համար ուսանողը պետք է կատարի հանձնարարված առաջադրանքի բոլոր պահանջները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կատարվելու է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Կօզտագործվեն աղյուսակներ, ցուցադրական նյութեր, նորմատիվներ, գյուղացիական տնտեսությունների վերաբերյալ տեղեկատու նյութեր, տեխնիկական միջոցներ, հիմնական և օժանդակ գրականություն, բանվորական տետրեր և տեխնոլոգիկական քարտերի բլանկներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	12 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է ճիշտ շարադրել անասնաբուժական ճյուղի կազմը. աշխատանքային ռեսուրսների, արտադրամիջոցների կերերի պահանջի հաշվարկման կարգը, հիմնական աշխատանքային գործընթացների կազմակերպման սկզբունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇԸ`

Կատարել հաշվարկներ կթվորների, նախրապահների, օժանդակ, բանվորների, կերերի, էլեկտրաէներգիայի, աշխատանքային գործընթացների մեքենայացման սարքավորումների պահանջի հաշվարկը, կազմել կերի պահանջի հաշվարկը, որոշել կերատեսակներով ապահովածության մակարդակը:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ, տարբերակներ, տվյալներ աշխատանքային ռեսուրսների, նյութերի նորմաների արտադրամիջոցների վերաբերյալ: Արդյունքը կգնահատվի առաջադրանքի պահանջվող չափանիշներով կատարելու դեպքում հարցման արդյունքների հիման վրա:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Այս արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում օգտագործվում են անասնաբուժական ճյուղին վերաբերվող համապատասխան գրականություն, տեղեկատուներ, նորմատիվներ, նորմաներ, տեխնիկական միջոցներ, բանվորական տետրեր:

Արդյունքի ուսուցումը հիմնված կլինի հարցումների, պարբերաբար ստուգումների, տրված առաջադրանքի բոլոր մանրամասների շարադրման և ներկայացման վրա:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է ճիշտ շարադրել աշխատանքային կոլեկտիվների կազմակերպման սկզբունքները, մեթոդները և հաշվարկել տարբեր կատեգորիայի աշխատողների աշխատանքի վարձատրությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇԸ`

Կարողանում է ճիշտ շարադրել և ներկայացնել կոլեկտիվների կազմակերպման հիմնական սկզբունքները, մեթոդները, անհատական և խմբային եղանակով աշխատանքի վարձատրության ձևերն ու կարգը:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն համապատասխան առաջադրանքներ, որոնք սահմանված չափանիշներին համապատասխան ըստ տարբերակների օգտագործվում է ուսանողների կողմից:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Այս արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Կօզտագործվեն համապատասխան գրականություն, գիտական ամսագրերի նյութեր կրաֆիկներ, գծապատկերներ, տեղեկատու վիճակագրական տվյալներ, ֆերմերային տնտեսությունների վերաբերյալ ցուցադրական նյութեր և բանվորական տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է ճիշտ շարադրել տնտեսության ընդհանուր ռեսուրսային ներուժի (հողային, աշխատանքային, արտադրական, ֆինանսական) օգտագործման կազմակերպման սկզբունքները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓԱՆԻՇԸ`

Ճիշտ է շարադրում հողատեսքերի առանձնահատկությունները, հողաշինարարության և հակաէռզոզին միջոցառումների, հողի տնօրինման, օգտագործման և վարձակալության կարգը, արտադրամիջոցների կազմը, կառուցվածքը և դրանց արդյունավետ օգտագործման ցուցանիշները, աշխատանքային

ռեսուրսների կազմը և կառուցվածքը, նշված ռեսուրսային ներուժի օգտագործման կազմակերպման սկզբունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ըստ ռեսուրսների տեսակների ուսանողների կտրվեն անհատական առաջադրանքներ, ելակետային տվյալներ, որը հնարավորություն կտա մշակելու ռեսուրսների օգտագործման հիմնավոր առաջարկություններ և սահմանելու ինչպես ռեսուրսների, այնպես էլ դրանց առանձին տարրերի միջև ռացիոնալ կառուցվածք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի յուրացումը կիրականացվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, որոնց ընթացքում ուսանողները ուսումնասիրում են ռեսուրսների էությունը, անհրաժեշտությունը, կազմն ու կառուցվածքը: Կարողանում է ինքնուրույն որոշումներ կայացնել ռեսուրսների առանձին տարրերի օգտագործման վերաբերյալ:

Ուսուցման ընթացքում օգտագործվում են ռեսուրսային ներուժին վերաբերվող համապատասխան գրականություն, ցուցադրական նյութեր, տեխնիկական միջոցներ, գծապատկերներ և բանվորական տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	10 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ԳՏԿ 1-08-025

Մոդուլի տևողությունը՝

80 ժամ

Դասընթացի մատուցման ձևը

Տեսական պարապմունք՝

40 ժամ

Գործնական աշխատանք՝

40 ժամ

Մոդուլի նպատակը՝

Այս մոդուլը մշակվել է ֆերմերային տնտեսության ապագա կազմակերպչին տալ տեսական և գործնական գիտելիքներ կառավարման հասկացության, գործառույթների և մեթոդների, կառավարման որպես գործընթացի մասին՝ տնտեսության շրջակա ու ներքին միջազգային գործոնների ազդեցության պայմաններում:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Տնտեսագիտության տեսություն» առարկան, «ԱԶԳ-ի էկոնոմիկայի քանակական և որակական բնութագրում», «Տնտեսական գործունեության պլանավորում» «Գյուղատնտեսության արտադրության կազմակերպում», մոդուլները:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել կառավարման էությունը, կառավարիչի դերը, մոտեցումները և ղեկավարման ոճերը,
2. կարողանա ճիշտ շարադրել կառավարման չորս գործառույթներն ու դրանց բնութագրերը (պլանավորում, կազմակերպում, խրախուսում և վերահսկում),
3. կարողանա բնութագրել կառավարման ներքին և արտաքին միջավայրը, կառավարման որոշումների ընդունման և իրականացման մեթոդները,
4. կարողանա ճիշտ շարադրել ռազմավարական մենեջմենթի մոդելները, նպատակները, խնդիրները, որոշումների ընդունման գործընթացը:

Գնահատման կարգը՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել կառավարման օրենքներն ու օրինաչափությունները, կառավարիչի դերը, մոտեցումները, մակարդակները և ղեկավարման ոճերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- ճիշտ է շարադրում կառավարման էությունը, մեթոդաբանությունը, սկզբունքները, դերը և զարգացման փուլերը,
- ճիշտ է շարադրում կառավարման հարաբերությունները, կազմակերպության ձևերն ու առանձնահատկությունները,

- կարողանում է ճիշտ շարադրել կառավարման մոտեցումները (համակարգային, իրավիճակային և գործընթացային), կառավարման մակարդակները, ղեկավարման ոճերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը կգնահատվի հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Բոլոր առաջադրանքները պետք է կատարվեն համաձայն դասախոսություններում տեղ գտած նյութերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոդական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական միջոցներ: Անհրաժեշտ է ունենալ օրինակներ կառավարման միջազգային պրակտիկայից:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 10 ժամ
 Գործնական աշխատանք` 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է ճիշտ շարադրել կառավարման գործառույթները ու դրանց բնութագրերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- ճիշտ է շարադրում կառավարման գործընթացի էությունը, կառավարման գործառույթների էությունը և դրանց դասակարգումը,
- հստակ բնութագրում է ռազմավարական պլանավորման գործառույթի նպատակը, ձևերը և սկզբունքները,
- կարողանում է շարադրել ռազմավարական պլանավորման գործընթացի կազմակերպման մեթոդները և տեսակները,
- կարողանում է հստակ բնութագրել կազմակերպության առաքելության, տեսլականի և նպատակների գաղափարները,
- կարողանում է բնութագրել ռազմավարական որոշումների ընդունման գործընթացը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր ձևով հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Բոլոր առաջադրանքները պետք է կատարվեն համաձայն դասախոսություններում տեղ գտած նյութերի:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոդական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական միջոցներ: Անհրաժեշտ է ունենալ օրինակներ կառավարման միջազգային պրակտիկայից:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք` 10 ժամ
 Գործնական աշխատանք` 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է բնութագրել կառավարման ներքին և արտադիքն միջավայրը, կառավարման որոշումների ընդունման և իրականացման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

- կարողանում է ճիշտ շարադրել կառավարման մեթոդները, կառավարչական որոշումների ընդունման կարգը, տնտեսության հանրային կառավարման համակարգը, կառավարման հիմունքները,
- կարողանում է բնութագրել խմբերի կառավարման գործընթացը, իշխանությունը և առանջնորդումը, կազմակերպության արտաքին և ներքին միջավայրը, արտաքին միջավայրի ուղակի և անուղակի ազդեցության գործոնները,
- կարողանում է ճիշտ շարադրել ներքին միջավայրի փոփոխականները, կառուցվածքը, խնդիրները, տեխնոլոգիաները և մարդկային գործոնի նշանակությունը, ներքին և արտաքին միջավայրերի փոխհարաբերակցությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոբանական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր, նորմատիվներ և նորմատիվային ակտեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանում է ճիշտ շարադրել ռազմավարական մենեջմենթի մեթոդները, նպատակները, խնդիրները, որոշումների ընդունման գործընթացը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՓՈՒՆԻՇԸ

- ճիշտ է շարադրում ռազմավարական մենեջմենթի մոդելները, մեթոդները, կազմակերպության հիմնական նպատակները և խնդիրները, կարողանում է ճիշտ բնութագրել ռազմավարական որոշումների ընդունման գործընթացի տարրերը, կառավարման բաղադրիչները, ռազմավարության իրականացման հաջորդական քայլներն ու անհրաժեշտ միջոցները,
- կարողանում է գնահատել ռազմավարական պլանավորման և գյուղատնտեսական բյուջեների կազմման ու կանխատեսման միջև եղած կապը,
- կարողանում կատարել կազմակերպության ներքին ռեսուրսների վերլուծություն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գրավոր տեսքով հարց ու պատասխանի և գործնական աշխատանքի հիման վրա: Բոլոր առաջադրանքները պետք է կատարվեն համաձայն դասախոսություններում տեղ գտած նյութերի: Հարցերին պետք է պատասխանվի ընդհանուր առմամբ ճիշտ, որոշ ոչ էական շեղումները և անճշտությունները չեն կարող բացասական հետևանք ունենալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոբանական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր, նորմատիվներ և նորմատիվային ակտեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
«ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»**

Մոդուլի դասիչը` ԳՏԿ 1-08-026

Մոդուլի տևողությունը`

116 ժամ

Դասընթացի մատուցման ձևը

Տեսական պարապմունք`	58 ժամ
Գործնական աշխատանք`	58 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նպատակն է սովորեցնել ֆինանսավարկային գործունեության հիմնական դրույթները, մեթոդները և խնդիրները: Ապագա մասնագետին հաղորդել գիտելիքներ տնտեսության կարիքների ապահովման համար ֆինանսավարկային միջոցներից և գործիքներից արդյունավետ օգտվելու նպատակով: Տեղեկացնել վարկավորման գործընթացի, անկանխիկ հաշվարկների, ինվեստիցիաների, վարկային միջոցների արդյունավետ ծավալների հաշվարկման մեթոդների մասին: Ծանոթացնել Կենտրոնական բանկի ֆինանսավարկային քաղաքականությանը, փողի ֆունկցիաներին, դրամաշրջանառության օրենքին, ինֆլյացիայի պատճառներին, բանկերի ֆունկցիային և բանկային բազմաթիվ գործառնություններին:

Մուտքային մակարդակը`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Տնտեսագիտության տեսություն», առարկան և «Տնտեսական գործունեության պլանավորում» մոդուլները:

Արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա շարադրել փողի ծագումը, էությունը, ֆունկցիաներ և դրամաշրջանառությունը շուկայական էկոնոմիկայում:
2. կարողանա ճիշտ բնութագրել ինֆլյացիայի էությունը, պատճառները, արտահայտման մեթոդները:
3. կարողանա շարադրել բանկերի գործունեությունը, ծագումը, էությունը, գործառնությունները, տեսակները, գործառնությունները:

4. կարողանա ճիշտ շարադրել վարկերի էությունը, ծագումը, գործառույթները, տեսակները, հաշվարկման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՔ 1. Ճիշտ է շարադրում փողի ծագման, էության, ֆունկցիաները և շուկայական տնտեսության պայմաններում դրամաշրջանառության անհրաժեշտությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇԸ`

- կարողանում է բնութագրել փողի ֆունկցիաները (արժեչափի, շրջանառության, վճարելամիջոցի, կուտակման միջոցի, համաշխարհային փողի),
- կարող է բնութագրել գիտելիքներ դրամաշրջանառության կառուցվածքը,
- կարող է որոշել շրջանառության մեջ փողի քանակը և շրջապտույտների թիվը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարություն կատարելու, ինչպես նաև գործնական առաջադրանքի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը դրական կարող է գնահատվել, եթե ընդհանուր առմամբ ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: Հնարավոր է համարվում նաև որոշակի աննշան շեղումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Գործնականի ժամանակ կտրվեն հաշվարկներ կապված շրջանառության մեջ փողի քանակի և դրամական միավորի շրջապտույտների քանակի որոշման հետ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	16 ժամ
Գործնական աշխատանք`	16 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 2. Կարողանում է ճիշտ բնութագրել ինֆլյացիայի էությունը, պատճառները և արտահայտման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇԸ`

- կարողանում է ճիշտ բացատրել ինֆլյացիայի էությունը և պատճառները,
- հստակ բնութագրում է ինֆլյացիայի արտահայտման ձևերը,
- կարողանում է շարադրել դրամաշրջանառության կայունացման մեթոդները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարություն կատարելու, ինչպես նաև գործնական առաջադրանքի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը դրական կարող է գնահատվել, եթե ընդհանուր առմամբ ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: Հնարավոր է համարվում նաև որոշակի աննշան շեղումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Գործնականի ժամանակ կբերվեն օրինակներ կապված ինֆլյացիայի արտահայտման ձևերի հետ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	14 ժամ
Գործնական աշխատանք`	14 ժամ

ԱՐԴՅՈՒՔ 3. Կարողանում է շարադրել բանկերի գործունեությունը, ծագումը, էությունը, գործառույթները և տեսակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇԸ`

Կարողանում է ճիշտ շարադրել.

- բանկերի էությունը, նրանց ծագումը և գործառույթները,
- գիտի Կենտրոնական բանկի գործառույթները, դրամավարկային քաղաքականությունը,
- գիտի առևտրային բանկի հիմնական գործառույթները, բանկերի առևտրամիջնորդային գործառնությունները,
- գիտի լիզինգային գործառնությունները,

- գիտի բանկերի գործառնությունները կապված արժեթղթերի հետ,
- գիտի խնայողական բանկերի էությունը և նրանց գործառնությունները:

ԳԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Հարցերին պետք է պատասխանվի ընդհանուր առմամբ ճիշտ, որոշ ոչ էական շեղումները և անճշտությունները չեն կարող բացասական հետևանք ունենալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոդական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր, տեսանյութեր, օրենսդրական և նորմատիվային ակտեր: Գործնականի ժամանակ կբերվեն բանկերի գործառնությունների, նաև պասիվային, ակտիվային, առևտրամիջնորդային, լիզինգային, արժեթղթերի հետ կապված գործառնության օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	14 ժամ
Գործնական աշխատանք`	14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ճիշտ է բնութագրում վարկերի էությունը, ծագման պայմանները, գործառնությունները, տեսակները և հաշվառման մեթոդները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՎՓԱՆԻՇԸ`

Կարողանում է ճիշտ շարադրել.

- վարկերի ծագումը, էությունը, գործառնությունները, տեսակները,
- վարկային օրենսդրությունը,
- առևտրային վարկերի տեսակները և դրանց տրամադրման կարգը,
- հիպոթեկային վարկի էությունը և տրամադրման կարգը,
- միջազգային, պետական, սպառողական վարկերի էությունը և տրամադրման կարգը, գյուղատնտեսական վարկերի առանձնահատկությունները,
- վարկերի վերադարձման ապահովվածության ձևերը,
- անկանխիկ գործարքների էությունը, տեսակները,

Կարողանում է հաշվարկել անհրաժեշտ վարկային միջոցների ծավալը, հաշվարկել վարկերի մարման առավել արդյունավետ գրաֆիկներ:

ԳԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, թեստային հանձնարարություն կատարելու, ինչպես նաև գործնական առաջադրանքի հիման վրա:

Արդյունքի ձեռքբերումը դրական կարող է գնահատվել, եթե ընդհանուր առմամբ ուսանողը ճիշտ է կատարում հանձնարարությունները: Հնարավոր է համարվում նաև որոշակի անճշան շեղումներ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոդական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր, տեսանյութեր, օրենսդրական և նորմատիվային ակտեր: Գործնական պարապմունքների ժամանակ կառաջարկվեն խնդիրներ կապված վարկի տոկոսի հաշվարկման հետ և տոկոսների սեզոնային բաշխման հետ: Կտրվեն առաջադրանքներ ժանոթանալ տեղական վարկային օրգաններին, կազմել դրանց ցանկը` նշելով ենթակայությունը, ֆունկցիաները և կառուցվածքը:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	14 ժամ
Գործնական աշխատանք`	14 ժամ

**ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
«ՀԱՇՎԱՊԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿԵՐ»**

Մոդուլի դասիչը` ԳՏԿ 1-08-027

Մոդուլի տևողությունը`	116 ժամ	
Դասընթացի մատուցման ձևը	Տեսական պարապմունք`	58 ժամ
	Գործնական աշխատանք`	58 ժամ

Մոդուլի նպատակը`

Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ օպերատիվ, վիճակագրական և հաշվապահական հաշվառման, բնական, աշխատանքային և դրամական չափանիշների, հաշվառման

միջոցների, դրամական միջոցների հաշվառման, նյութերի և հիմնական միջոցների հաշվառման, գույքագրման և միջոցների դուրսգրման, փաստաթղթավորման, միջոցների ծախսի և արտադրանքի ինքնարժեքի, արտադրանքի իրացման հաշվետվությունների և տնտեսական հաշվեկշռի կազմման վերաբերյալ:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը սովորելուց առաջ ուսանողը պետք է նախորոք ուսումնասիրի և յուրացնի «Տնտեսագիտության տեսություն» առարկան, «Վիճակագրություն», «ԱԱՀ-ի էկոնոմիկայի քանակական և որակական գնահատում», «Տնտեսաան գործունեության պլանավորում», «Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում» մոդուլները:

Արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. կարողանա ճիշտ շարադրել օպերատիվ, վիճակագրական և հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները, տեխնիկան և ձևերը,
2. կարողանա հաշվառել դրամական միջոցները, աշխատանքի վարձատրությունը, օգտագործվող նյութերը, ձեռքբերված հիմնական միջոցները և դրանց գույքագրումն ու դուրս գրումը,
3. կարողանա հաշվառել բուսաբուծական, անասնաբուծական ճյուղերի արտադրական ծախսերը, պատրաստի արտադրանքը և իրացումը,
4. կարողանա հաշվառել ֆինանսական արդյունքները, բանկերի վարկերը և փոխառու միջոցները, ֆինանսական արդյունքները և այլ կազմակերպությունների ու պետության հետ ունեցած պարտավորությունները,
5. կարողանա կազմել հաշվետվություններ և հաշվեկշիռ:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել օպերատիվ, վիճակագրական և հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները, տեխնիկան և ձևերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Հստակ ներկայացնում է օպերատիվ վիճակագրական և հաշվապահական հաշվառման առանձնահատկությունները, հաշվառման տեխնիկան և բնութագրում է հաշվապահական հաշվառման ձևերը և գրանցման կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Ուսանողներին կտրվեն օպերատիվ հաշվառման, վիճակագրական և հաշվապահական հաշվառման հիմնական փաստաթղթեր, որը նպատակ ունի ուսանողին ծանոթացնելու դրանց բովանդակությանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը յուրացվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում են անհրաժեշտ ձևեր, մեթոդական ցուցումներ, գրականություն և նորմատիվային նյութեր, տեխնիկական միջոցներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	10 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է հաշվառել դրամական միջոցները աշխատանքի վարձատրությունը, նյութերի ծախսի, արտադրության միջոցների մուտքագրումը, գույքագրումը և դուրս գրումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

- Կարողանա ճիշտ հաշվառել աշխատանքի վարձատրությունը և նյութերը,
- կարողանա կատարել արտադրության հիմնական միջոցների մուտքագրում, ամորտիզացիոն հատկացումների հաշվարկը, հաշվառել և դուրս գրել միջոցները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ, ելակետային տվյալներ, հաշվառման ձևեր, նորմատիվային տվյալներ: Արդյունքի ապահովումը կհիմնվի այն բոլոր չափանիշների վրա, ըստ որի ուսանողը պետք է կատարի առաջադրված պահանջները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կիրականացվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ուսանողին հնարավորություն տալ հմտություններ ձեռքբերել միջոցների, նյութերի մուտքերի և ծախսերի հաշվառման վերաբերյալ: Ուսուցման գործընթացում օգտագործվելու են մասնագիտական, մեթոդական գրականություն, տեխնիկական միջոցներ, գրանցամատյաններ, հաշվառման ձևեր, նորմատիվային նյութեր, աշխատանքային տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է հաշվառել բուսաբուծության, անասնաբուծության պատրաստի արտադրանքը, իրացումը, արտադրության վրա կատարվող ծախսերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ՝

Կարողանում է հստակ հաշվառել բուսաբուծական և անասնաբուծական ճյուղերի պատրաստի արտադրանքը, իրացումը և արտադրության ծախսերը, լրացնելով տրված փաստաթղթերի ձևերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Տրվում են առաջադրանքներ տնտեսության առանձին ճյուղերում արտադրված արտադրանքների վերաբերյալ, հաշվառման բլանկներ, տվյալներ հիմնական, լրացուցիչ և օժանդակ արտադրանքների և ծախսերի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհիմնվի սահմանված չափանիշների վրա, որի համար ուսանողը պետք է կատարի առաջադրանքին ներկայացվող պահանջները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ամրապնդել ուսանողի իմացությունը տնտեսությունում ստացված հիմնական, լրացուցիչ և օժանդակ արտադրանքների և առանձին արտադրատեսակներին վերագրվող ծախսերի հաշվառումը: Ուսուցման ընթացքում կօգտագործվեն ցուցադրական նյութեր, տեխնիկական միջոցներ, հաշվառման փաստաթղթեր, մեթոդական և ուսումնական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Կարողանա հաշվառել ֆինանսական արդյունքները, բանկերի վարկերը, պարտավորությունները՝ հարկերը, կրեդիտորական և դեբիտորական պարտքերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ՝

Կարողանում է կոնկրետ տնտեսության օրինակով հաշվառել ֆինանսական արդյունքները, փոխառու միջոցները, պետության և իրավաբանական անձանց հետ ունեցած պարտավորությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Ուսանողներին հանձնարարվում են առաջադրանքներ տնտեսության ֆինանսական արդյունքների, բանկերից ստացված վարկերի, դրամարկղում ունեցած միջոցների, հարկերի և պարտքերի և դրանց շարժի վերաբերյալ: Արդյունքի ձեռքբերումը կհիմնվի այն չափանիշների վրա, որի համար ուսանողը կկատարի նախատեսված պահանջները: Արդյունքը կգնահատվի ստուգումների և հարցումների միջոցով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը կուսուցանվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով ապահովել ֆինանսական արդյունքների, բանկերի վարկերի, պարտավորությունների, դեբիտորական, կրեդիտորական պարտքերի հաշվառման իմացությունը: Ուսուցման ընթացքում օգտագործվելու են ուսումնա-մեթոդական գրականության, հրահանգներ, որոշումներ, տեխնիկական միջոցներ և աշխատանքային տետրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	12 ժամ
Գործնական աշխատանք՝	12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կարողանում է կազմել և ներկայացնել հաշվետվություններ և հաշվեկշիռ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ՝

Կարողանա կազմել տնտեսության եռամսյա, կիսամյա, տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝

Ուսանողին կտրվեն տնտեսության հաշվեկշռի հոդվածների վերաբերյալ տվյալներ, եռամսյա, կիսամյա հաշվետվությունների օրինակներ, գրանցամատյաններ: Արդյունքի գնահատումը կկատարվի

այն չափանիշներով, որոնք նախատեսված են նշված առաջադրանքի կատարման համար նշված պահանջներում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Կօգտագործվեն ուսումնամեթոդական գրականություն, տեխնիկական միջոցներ, հաշվետվություններ, հրահանգներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	12 ժամ
Գործնական աշխատանք`	12 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻԱ»

Մոդուլի դասիչը` ԳՏԿ 1-08-028

Մոդուլի տևողությունը`

68 ժամ

Դասընթացի մատուցման ձևը

Տեսական պարապմունք`

34 ժամ

Գործնական աշխատանք`

34 ժամ

Մոդուլի նպատակը`

Այս մոդուլը նախատեսված է ֆերմերային տնտեսության ապագա կազմակերպչին մարդկային ռեսուրսների հետ արդյունավետ աշխատելու, նրանց աշխատանքը առավել արդյունավետ կազմակերպելու և ֆերմերային տնտեսությունում աշխատանքային կայուն միջավայր ձևավորելու հմտություններ հաղորդելու նպատակով:

Մուտքային մակարդակը`

Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Տնտեսագիտության տեսություն» առարկան, «Գյուղատնտեսության արտադրության կառավարում» «Տնտեսական գործունեության պլանավորում», «Ֆինանսավարկային գործունեություն» մոդուլները:

Արդյունքները`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. կարողանա ճիշտ շարադրել մարդկային ռեսուրսների էությունը և մոտիվացիայի սկզբունքները, ընդհանուր բնութագիրը և անհրաժեշտությունը:
2. կարողանա ճիշտ բնութագրել նյութական և բարոյահոգեբանական խրախուսման դերը դրդապատճառների համակարգի մեջ:
3. կարողանա հստակ շարադրել մարդկային ռեսուրսների խրախուսման մեթոդները և համակարգերը:

Գնահատման կարգը`

Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Կարողանում է ճիշտ շարադրել մարդկային ռեսուրսների և մոտիվացիայի սկզբունքները, ընդհանուր բնութագիրը և անհրաժեշտությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉՍՓԱՆԻՇԸ`

- կարողանում է ճիշտ շարադրել անձնակազմի կառուցվածքը և կառավարման փուլերը,
- կարողանում է որոշել աշխատանքային ռեսուրսների պահանջը` տարբեր ճյուղերի,
- կարողանում է ճիշտ շարադրել կազմակերպության անձնակազմի հավաքագրման, կադրերի ընտրության, պատրաստման և վերապատրաստման գործընթացները, աշխատողի անարդյունավետ աշխատանքի հիմնական պատճառները, մոտիվացիայի որպես գիտության պատմությունը,
- գիտի խրախուսման բովանդակային և վարքագծային տարբերությունները,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Հարցերին պետք է պատասխանվի ընդհանուր առմամբ ճիշտ, որոշ ոչ էական շեղումները և անճշտությունները չեն կարող բացասական հետևանք ունենալ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և

մեթոբանական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր, տեսանյութեր, օրենսդրական և նորմատիվային ակտեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 10 ժամ
Գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կարողանում է ճիշտ բնութագրել նյութական և բարոյահոգեբանական խրախուսման դերը դրդապատճառները համակարգի մեջ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Գիշտ է շարադրում՝

- խրախուսման տնտեսական մեթոդները և դրանց կիրառման պայմանները,
- խրախուսման վարչական մեթոդները և դրանց կիրառման պայմանները,
- խրախուսման սոցիալական մեթոդները և դրանց կիրառման պայմանները,
- խրախուսման հոգեբանական մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Հարցերին պետք է պատասխանվի ընդհանուր առմամբ ճիշտ, որոշ ոչ էական շեղումները և անճշտությունները չեն կարող բացասական հետևանք ունենալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոբանական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կարողանում է հստակ շարադրել մարդկային ռեսուրսների խրախուսման մեթոդները և համակարգերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Գիշտ է շարադրում՝

- աշխատանքային ռեսուրսների գնահատման մեթոդները,
- աշխատանքի արդյունավետության բարձրացման մեթոդները (հմտությունների բազմազանության ավելացում, աշխատանքի ամբողջականության մեծացում, աշխատանքի կարևորության բարձրացում, ինքնավարության ավելացում, հետադարձ կապի ուժեղացում),
- կիրառվող խրախուսման համակարգերի կառուցվածքային տարրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Արդյունքի ձեռքբերումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Հարցերին պետք է պատասխանվի ընդհանուր առմամբ ճիշտ, որոշ ոչ էական շեղումները և անճշտությունները չեն կարող բացասական հետևանք ունենալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցանումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման գործընթացի ընթացքում կօգտագործվի ուսումնական, մասնագիտական և մեթոբանական գրականություն, համապատասխան մշակումներ, ցուցադրական նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝ 12 ժամ
Գործնական աշխատանք՝ 12 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ»

Մոդուլի դասիչը՝ ԳՏԿ 1-08-029

Մոդուլի տևողությունը՝ 82 ժամ
Դասընթացի մատուցման ձևը՝ Տեսական պարապմունք՝ 41 ժամ

Մոդուլի դասիչը՝ ԳՏԿ-1-08-029

Մոդուլի նպատակը՝

Տալ գիտելիքներ արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների նախագծման, շինարարության, շին. աշխատանքների մրցութային փաթեթների մշակման, շին. մոնտաժային աշխատանքների կազմակերպման, անհրաժեշտ նյութերի պահանջի հաշվարկման կազմման, մասնակի և ընդհանուր նախահաշիվների կազմման, շինարարական աշխատանքների պայմանագրերի կազմման և կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվատվությունների ներկայացման վերաբերյալ:

Մուտքային մակարդակը՝

Այս մոդուլը սովորելուց առաջ ուսանողը պետք է տեղյակ լինի նախագծման հիմունքներին, սկզբունքներին, մեթոդներին, փաստաթղթերի տեսակներին, բովանդակությանը, նախագծվող կազմակերպություններին և յուրացրած լինի ԳՏԿ-1-08-001-ից մինչև ԳՏԿ-1-08-027 մոդուլները:

Արդյունքները

Այս մոդուլը յուրացնելու հետո ուսանողը պետք է.

1. կարողանա ճիշտ շարադրել շինարարության նախագծման հաջորդականությունը, թվարկի համապատասխան նորմատիվները և անհրաժեշտ իրավական հիմքերը,
2. կարողանա մշակել կառույցների նախագծեր և նախահաշիվներ,
3. կարողանա կազմել շինարարական աշխատանքների կատարման օրացուցային պլաններ և մշակել իրականացման պայմանագրեր,
4. կարողանա ճիշտ շարադրել շինարարական օբյեկտների ընդունման, գրանցման և շահագործման սկզբունքները, կարգը և համապատասխան փաստաթղթերի բովանդակությունը:

Գնահատման կարգը

Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ճիշտ է շարադրում գյուղատնտեսական օբյեկտների նախագծման հաջորդականությունը և կարողանում է թվարկել համապատասխան նորմատիվները և իրավական հիմքերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Հստակ շարադրում է անհրաժեշտ օբյեկտների նախագծման և շինարարության հաջորդականությունը, գիտի շինարարության նորմատիվները և իրավական հիմքերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ, տեղեկատուներ, հրահանգներ, իրավական փաստաթղթեր նախագծային չափոշիչներ և գործիքներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքի ուսուցումը կատարվում է տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, նպատակ ունենալով պարզել ուսանողի իմացության նախագծման նոր մատիվների, իրավական փաստաթղթերի և հիմնական գործոնների վերաբերյալ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական պարապմունք՝	10 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. – Կարողանում է կազմել ֆերմերային տնտեսության համար անհրաժեշտ շինարարական կառույցների նախագծեր և նախահաշիվներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ՝

Կարողանում է կազմել առանձին և ընդհանուր աշխատանքների գծով նախահաշիվները, գիտի նախահաշիվների կազմման միջոցների պահանջի հաշվարկը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Ուսանողներին տրվում են առաջադրանքներ, ելակետային նյութեր նախագծվող օբյեկտների վերաբերյալ: Արդյունքը կգնահատվի նշված չափանիշներով կատարման և հարցումների միջոցով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով նպատակ ունենալով ուսուցանել ծախսերի, նյութերի պահանջի հաշվարկման կարգը, մեթոդները և որոշելու օբյեկտի նախահաշվային արժեքը: Ուսուցման ընթացքում կօգտագործվեն ուսումնա-մեթոդական գրականություն, տեղեկատու նյութեր, նորմատիվներ, տեխնիկական միջոցներ, բանվորական տետրեր և բլանկներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	11 ժամ
Գործնական աշխատանք`	11 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. – Կարողանում է կազմել տնտեսության անհրաժեշտ օբյեկտների շինարարական աշխատանքների օրացուցային պլաններ և իրականացման պայմանագրեր:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Կարողանում է կազմել ըստ ժամկետների գրաֆիկներ, կնքել պայմանագրեր, գիտի օրացուցային պլանների կազման մեթոդիկան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին կտրվեն առաջադրանքներ, որևէ օբյեկտի գծով կազմված նախագծային փաստաթղթեր, պայմանագրերի ձևեր: Արդյունքի յուրացումը գնահատվում է առաջադրանքը տրված չափորոշիչներին համապատասխան կատարելու դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով, որի ընթացքում ուսանողները տիրապետում են օրացուցային պլանների կազման, շինարարական պայմանագրերի բովանդակության և մշակման մեթոդներին, դրանց կնքման կարգին:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. – Կարողանում է ճիշտ շարադրել շինարարական օբյեկտների ավարտական ակտերի բովանդակությունը, դրանց ընդունման, գրանցման և շահագործման կարգը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ`

Հստակ ներկայացնում է շինարարական օբյեկտների ընթացիկ և ավարտական աշխատանքների ամփոփման ակտերին, գիտի ընդունման, գրանցման և շահագործման պայմաններն ու կարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ`

Ուսանողներին տրվում են առաջադրանքներ, տարբերակներ, աշխատանքների կատարման տեղեկագրեր, իրավական փաստաթղթեր: Արդյունքի գնահատումը կատարվում է առաջադրանքի պահանջները ըստ չափորոշիչների կատարման դեպքում, հարցումների միջոցով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ`

Արդյունքի ուսուցումը կկատարվի տեսական պարապմունքների և գործնական աշխատանքների միջոցով: Ուսուցման ընթացքում օգտագործվում են ուսուցման տեխնիկական միջոցներ, փաստաթղթերի ձևեր, հրահանգներ, որոշումներ, մասնագիտական և մեթոդական գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ`

Տեսական պարապմունք`	10 ժամ
Գործնական աշխատանք`	10 ժամ